

**5.4. 2010 թվականի փետրվար ամսվա շրջակա բնական միջավայրի աղտոտվածության մոնիթորինգ**

Ըստ ՀՀ բնապահպանության նախարարության տեղեկատվության, հանրապետության շրջակա բնական միջավայրը 2010թ. փետրվարին ունեցել է հետևյալ բնութագիրը.

**Օդային ավազանի որակի մոնիթորինգ:** 2010թ. փետրվարին հանրապետության մթնոլորտի աղտոտվածության որակի մոնիթորինգ իրականացվել է Երևան, Գյումրի, Վանաձոր, Հրազդան, Ալավերդի և Արարատ քաղաքներում տեղակայված 12 մշտական լաբորատոր դիտակայանների, Երևան, Գյումրի, Վանաձոր, Հրազդան, Ալավերդի, Ծաղկաձոր, Վաղարշապատ և Աբովյան, քաղաքներում տեղակայված պասիվ նմուշառման 135 դիտակետերի, Ալավերդի քաղաքում և Ամբերդ գյուղում տեղակայված 1-ական ավտոմատ կայանների միջոցով: Ընդհանուր առմամբ վերցվել է օդի 14482 փորձանմուշ:

**Մթնոլորտի աղտոտվածության որակի մոնիթորինգի անցկացման համար տեղակայված դիտակայանների, դիտակետերի, ավտոմատ կայանների և վերցված փորձանմուշների քանակական բաշխվածությունն ըստ քաղաքների և Ամբերդ գյուղի, 2010թ. փետրվար**

(միավոր)

	Դիտակայանների		Դիտակետերի		Ավտոմատ կայանների	
	քանակը	փորձանմուշների քանակը	քանակը	փորձանմուշների քանակը	քանակը	փորձանմուշների քանակը
ք.Երևան	4	972	15	112	-	-
ք.Արարատ	1	72	-	-	-	-
ք.Ալավերդի	2	96	18	141	1	10915
ք.Վանաձոր	3	768	24	181	-	-
ք.Գյումրի	1	24	24	191	-	-
ք.Հրազդան	1	72	12	94	-	-
ք.Ծաղկաձոր	-	-	14	112	-	-
ք.Վաղարշապատ	-	-	16	60	-	-
ք.Աբովյան	-	-	12	96	-	-
գ.Ամբերդ	-	-	-	-	1	576
<b>Ընդամենը</b>	<b>12</b>	<b>2004</b>	<b>135</b>	<b>987</b>	<b>2</b>	<b>11491</b>

Երևան քաղաքի մթնոլորտային օդում հունվար ամսվա համեմատ ազոտի երկօքսիդի միջին ամսական կոնցենտրացիան բարձրացել է 3.7 անգամ:

**Վերահսկվող աղտոտիչների առավելագույն և միջին ամսական կոնցենտրացիաներն ու դրանց սահմանային թույլատրելի կոնցենտրացիաները (ՄԹԿ) ք.Երևանի մթնոլորտային օդում, 2010թ. փետրվար**

(մգ/մ<sup>3</sup>)

Աղտոտիչ նյութերի անվանումը	Կոնցենտրացիաները		ՄԹԿ-ները	
	առավելագույն	միջին ամսական	միանվագ առավելագույն	միջին օրական
Փոշի	0.73	0.12	0.5	0.15
Ծծմբի երկօքսիդ	0.10	0.04	0.50	0.05
Ազոտի երկօքսիդ	0.383	0.107	0.085	0.04
Գետնամերձ օզոն	0.097	0.044	0.16	0.03
Բենզոլ	0.084	0.007	1.5	0.1
Տոլուոլ	0.016	0.002	0.6	0.6
Քսիլոլներ	0.075	0.012	0.2	0.2
Ածխածնի մոնօքսիդ	-	-	5	3

Քաղաքի պասիվ նմուշառման դիտակետերի միջոցով վերցված մթնոլորտային օդի փորձանմուշներում ծծմբի երկօքսիդի և ազոտի երկօքսիդի միջին ամսական կոնցենտրացիաները դիտվել են թույլատրելի նորմաների սահմաններում:

**Գյումրի քաղաքի** մթնոլորտային օդում փոշու միջին ամսական կոնցենտրացիան ՍԹԿ-ն գերազանցել է 1.9 անգամ: Հունվար ամսվա համեմատ փոշու միջին ամսական կոնցենտրացիայի էական փոփոխություն չի դիտվել: Քաղաքի պասիվ նմուշառման դիտակետերի միջոցով վերցված մթնոլորտային օդի փորձանմուշներում ծծմբի երկօքսիդի միջին ամսական կոնցենտրացիան ՍԹԿ-ից ցածր է եղել 3.4 անգամ, ազոտի երկօքսիդինը՝ 3.1 անգամ:

**Վանաձոր քաղաքի** մթնոլորտային օդում հունվար ամսվա համեմատ փոշու և ծծմբի երկօքսիդի միջին ամսական կոնցենտրացիաները բարձրացել են 1.2-ական անգամ:

**Վերահսկվող աղտոտիչների առավելագույն և միջին ամսական կոնցենտրացիաներն ու դրանց ՍԹԿ-ները ք.Վանաձորի մթնոլորտային օդում, 2010թ. փետրվար**

(մգ/մ<sup>3</sup>)

Աղտոտիչ նյութերի անվանումը	Կոնցենտրացիաները		ՍԹԿ-ները	
	առավելագույն	միջին ամսական	միանվագ առավելագույն	միջին օրական
Փոշի	-	0.29	0.5	0.15
Ծծմբի երկօքսիդ	1.27	0.14	0.50	0.05
Ազոտի երկօքսիդ	0.220	0.044	0.085	0.04
Ազոտի օքսիդ	0.15	0.03	0.40	0.06

Քաղաքի պասիվ նմուշառման դիտակետերի միջոցով վերցված մթնոլորտային օդի փորձանմուշներում ծծմբի երկօքսիդի և ազոտի երկօքսիդի միջին ամսական կոնցենտրացիաները դիտվել են թույլատրելի նորմաների սահմաններում:

**Հրազդան քաղաքի** մթնոլորտային օդում ցեմենտի փոշու միջին ամսական կոնցենտրացիան ՍԹԿ-ն գերազանցել է 6.1 անգամ, իսկ միանվագ առավելագույն կոնցենտրացիան՝ 5.2 անգամ: Հունվար ամսվա համեմատ ցեմենտի փոշու միջին ամսական կոնցենտրացիան բարձրացել է 1.5 անգամ: Քաղաքի պասիվ նմուշառման դիտակետերի միջոցով վերցված մթնոլորտային օդի փորձանմուշներում ծծմբի երկօքսիդի միջին ամսական կոնցենտրացիան ՍԹԿ-ից ցածր է եղել 3.7 անգամ, ազոտի երկօքսիդինը՝ 3.5 անգամ:

**Ալավերդի քաղաքի** դիտակայաններում դիտարկումներ կատարվել են միայն մթնոլորտային օդում փոշու պարունակության որոշման համար: Փոշու միջին ամսական կոնցենտրացիան դիտվել է թույլատրելի նորմայի սահմանում: Քաղաքի պասիվ նմուշառման դիտակետերի միջոցով վերցված մթնոլորտային օդի փորձանմուշներում ծծմբի երկօքսիդի միջին ամսական կոնցենտրացիան ՍԹԿ-ից ցածր է եղել 1.1 անգամ, ազոտի երկօքսիդինը՝ 6.3 անգամ: Ավտոմատ սարքի միջոցով ածխածնի մոնօքսիդի պարունակության որոշման համար կատարվել է օդի 4707, ծծմբի երկօքսիդի համար՝ 4670, ազոտի օքսիդների համար՝ 767, գետնամերձ օդոնի համար՝ 771 դիտարկում: Ըստ ավտոմատ սարքի տվյալների, ավտոմատ կայանի հարակից տարածքի մթնոլորտային օդի փորձանմուշներում ծծմբի երկօքսիդի միջին ամսական կոնցենտրացիան ՍԹԿ-ն գերազանցել է 2.7 անգամ, իսկ ազոտի երկօքսիդինը ՍԹԿ-ից ցածր է եղել 3.6 անգամ, ազոտի օքսիդինը՝ 2.6 անգամ, գետնամերձ օդոնինը՝ 1.6 անգամ:

**Արարատ քաղաքի** մթնոլորտային օդում ցեմենտի փոշու միջին ամսական կոնցենտրացիան ՍԹԿ-ն գերազանցել է 1.9 անգամ, իսկ միանվագ առավելագույն կոնցենտրացիան՝ 3.4 անգամ: Հունվար ամսվա համեմատ ցեմենտի փոշու միջին ամսական կոնցենտրացիան նվազել է 1.2 անգամ:

**Օաղկաձոր քաղաքի** պասիվ նմուշառման դիտակետերի միջոցով վերցված մթնոլորտային օդի փորձանմուշներում ծծմբի երկօքսիդի միջին ամսական կոնցենտրացիան ՍԹԿ-ից ցածր է եղել 4.5 անգամ, ազոտի երկօքսիդինը՝ 6.6 անգամ:

**Վաղարշապատ քաղաքի** պասիվ նմուշառման դիտակետերի միջոցով վերցված մթնոլորտային օդի փորձանմուշներում ծծմբի երկօքսիդի միջին ամսական կոնցենտրացիան ՍԹԿ-ից ցածր է եղել 4.7 անգամ, ազոտի երկօքսիդինը՝ 3.4 անգամ:

**Արուվյան քաղաքի** պասիվ նմուշառման դիտակետերի միջոցով վերցված մթնոլորտային օդի փորձանմուշներում ծծմբի երկօքսիդի միջին ամսական կոնցենտրացիան ՍԹԿ-ից ցածր է եղել 3.5 անգամ, ազոտի երկօքսիդինը՝ 2.3 անգամ:

**Ամբերդ գյուղում** ֆոնային կոնցենտրացիաների որոշման նպատակով ավտոմատ եղանակով վերցվել է օդի 84 և փոշու 28 փորձանմուշ: Օդի փորձանմուշներում որոշվել են ծծմբի երկօքսիդի, ամոնիակի և նիտրատ իոնի, իսկ փոշու փորձանմուշներում՝ քլոր, նիտրատ, սուլֆատ, ամոնիում իոնների և 21 քիմիական տարրերի պարունակությունները: Մթնոլորտային օդում գետնամերձ օզոնի որոշման համար անընդմեջ ռեժիմով կատարվել է 464 դիտարկում: Գետնամերձ օզոնի միջին ամսական կոնցենտրացիան ՍԹԿ-ն գերազանցել է 3.0 անգամ, իսկ ամոնիակինը՝ ՍԹԿ-ից ցածր է եղել 66.7 անգամ:

**Ամբերդ գյուղի ավտոմատ կայանի հարակից տարածքի տեղումներում վերահսկվող նյութերի պարունակությունները, 2010թ. փետրվար**

Նմուշների վերցման ամսաթիվը	Ցուցանիշներ		
	ջրածնային ցուցիչ (pH)	ամոնիում իոն ( $մգN/դմ^3$ )	տեսակարար էլեկտրահաղորդականություն, ( $մՄիմ/սմ$ )
11-12	6.13	0.628	15.4
22	6.60	0.558	26.6
24-25	6.64	0.628	27.9
25-26	6.68	0.725	25.6

**Մակերևութային ջրերի որակի մոնիթորինգ:** Փետրվարին մակերևութային ջրերի նմուշառ կատարվել է հանրապետության 24 գետերի, Կեչուտի ջրամբարի, Երևանյան լճի և Սևանա լճի 77 դիտակետերում: Վերցված 24 փորձանմուշներում որոշվել է 22-26-ական ցուցանիշ:

**Մակերևութային ջրերի աղտոտվածության վիճակը, 2010թ. փետրվար**

Ջրային օբյեկտի անվանումը	Դիտակետի համարը	Դիտակետը (հատվածքը)	ՍԹԿ-ն գերազանցող միացությունների կոնցենտրացիաները			
			ԹԿՊ <sub>5</sub> (ՍԹԿ՝ 3.0 $մգ/դմ^3$ )	ԹՔՊ (ՍԹԿ՝ 30.0 $մգ/դմ^3$ )	նիտրիտ իոն (ՍԹԿ՝ 0.024 $մգN/դմ^3$ )	ամոնիում իոն (ՍԹԿ՝ 0.39 $մգN/դմ^3$ )
Փամբակ	2	ք.Սպիտակից 0.5 կմ ներքև	-	-	0.032	-
	4	ք.Վանաձորից 4.5 կմ ներքև	3.86	-	0.043	0.674
Դեբեդ	6	ք.Այրումից 0.5 կմ վերև	4.20	-	0.028	-
	7	ՀՀ պետական սահմանի մոտ	-	-	0.031	-
Տաշիր	11	Միխայելովկա գյուղից 0.5 կմ վերև	-	-	0.039	0.463
	12	Սարատովկա գյուղից 0.5 կմ ներքև	-	-	0.042	-

5.ՍՈՑԻԱԼ-ԺՈՂՈՎՐԴԱԳՐԱԿԱՆ ՀԱՏՎԱԾ

Ջրային օբյեկտի անվանումը	Դիտակետի համարը	Դիտակետը (հատվածքը)	ՍԹԿ-ն գերազանցող միացությունների կոնցենտրացիաները			
			ԹԿՊ <sup>5</sup> (ՍԹԿ՝ 3.0 մգ/դմ <sup>3</sup> )	ԹՔՊ (ՍԹԿ՝ 30.0 մգ/դմ <sup>3</sup> )	նիտրիտ իոն (ՍԹԿ՝ 0.024 մգN/դմ <sup>3</sup> )	ամոնիում իոն (ՍԹԿ՝ 0.39 մգN/դմ <sup>3</sup> )
Աղստ	16	ք.Դիլիջանից 0.5 կմ ներքև	-	-	-	0.837
	18	ՀՀ պետական սահմանի մոտ	3.60	-	0.032	0.689
Գետիկ	20	Գետաբերան	3.40	-	-	-
Արաքս	26	Հրազդան գետի թափման կետից վերև	3.30	-	-	0.524
	27	Հրազդան գետի թափման կետից ներքև	3.40	-	0.058	0.781
	28	Արմաշ գյուղից 0.5 կմ ներքև	-	34	-	1.180
	29	ք.Ագարակից 2 կմ հարավ	-	34	-	-
	30	ք.Ագարակից 2.5 կմ հարավ-արևելք	-	38	-	-
Սևջուր	40	ք.Վաղարշապատից 10 կմ հարավ	-	-	0.065	-
	41	ք.Վաղարշապատից 11 կմ հարավ-արևելք	-	-	0.071	-
	42	Ռանչպար գյուղից 0.5 կմ ներքև	-	-	0.064	-
Քասախ	47	Գետաբերան	4.00	-	-	-
Հրազդան	54	Արզնի ՀԷԿ-ից 0.5 կմ ներքև	-	-	0.047	-
	55	Դարբնիկ գյուղի մոտ	4.50	-	0.150	33.843
	56	Գետաբերան	-	-	0.094	3.169
Գետառ	59	Գետաբերան	-	-	0.296	10.353
Եղեգիս	88	Շատին գյուղից 0.5 կմ ներքև	-	68	-	-
Ողջի	92	ք.Քաջարանից 1.8 կմ ներքև	-	-	-	2.322
	94	ք.Կապանից 6.8 կմ ներքև	-	48	0.042	0.481
Արծվանիկ	96	Գետաբերան	-	38	0.099	-
Որոտան	101	ք.Սիսիանից 1 կմ ներքև	-	-	-	0.530
Գորիսգետ	107	ք.Գորիսից 1.5 կմ ներքև	-	-	0.066	0.410
Երևանյան լիճ	112	Ամբարտակից գետի հոսանքով ներքև	-	-	0.053	0.517
Սևանա լիճ	115	Թերակղզուց 3.5 կմ դեպի արևելք	-	38	-	-
	117	Ձկնագետի գետաբերանի շրջանում՝ մակերևույթից	-	36	-	-
	123	Փամբակ գյուղից 13 կմ 235 <sup>0</sup> ազիմուտով՝ 20 մ խորքից	3.60	-	-	-
	125	Կարճաղբյուր գետի գետաբերանի շրջանում	3.90	-	-	-
	126	Արփա-Սևան ջրատարի էլքի մոտ	-	34	-	-
	128	Երանոս գյուղից 15 կմ 90 <sup>0</sup> ազիմուտով				
		մակերևույթից 20 մ խորքից	-	36	-	-
	129	Երանոս գյուղից 24 կմ 90 <sup>0</sup> ազիմուտով՝ 20 մ խորքից	-	34	-	-
	130	Նորադուս գյուղից 7 կմ հյուսիս-արևմուտք	-	34	-	-
	131	Չկալովկա գյուղից 7.5 կմ հյուսիս				
		մակերևույթից 20 մ խորքից	4.10	36	-	-